«ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ՀՀ Արմավիրի մարզ ք. Մեծամոր Հեռ./0237/ 3-34-34 էլ.փոստ-mmc_am@mail.ru

«25 » «04 » 2024թ.

№ 172

«ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԱՐԹՈՒՐ ՇԵՆԳՈՒՆՑ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Մեծամոր ԲԿ» ՓԲԸ-ի և «Լինարե Մեդ» ՍՊԸ-ի միջև 15.03.2024թ.-ին կնքվել է բժշկական նյութերի, գործիքների և պարագաների մատակարարման թիվ ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/05-7 պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր):

Սույն թվականի ապրիլի 10-ին ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից գրությամբ ստացվել են փաստարկներ այն մասին, որ «Լինարե Մեդ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 01063047) և «Լինարե» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 09212215) հանդիսանում են փոխկապակցված կազմակերպություններ:

«Լինարե» ՍՊ ընկերությունը 2023 թվականի դեկտեմբերի 23-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 23-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ.-ի 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև Կարգ) 121-րդ կետի համաձայն մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում (գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ) ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն, այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում

պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Պատվիրատուն միակողմանիորեն հրաժարվում է 15.03.2024թ.-ին կնքված թիվ ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/05-7 պայմանագրից, համապատասխանաբար այն համարելով լուծված:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Մ.Գ.ՎԱՆՅԱՆ**